

423), կ'ուզէր՝ որ հաւատացեալք նախ Ս. Խորհրդոյն մերձեանան Զատկին օրն իսկ, «եւ ապա ճաշակեն ի լուծական կերակուրսն», որով ճրագալուցի լուծումը կը ջնջուէր: Նոյն գաղափարէն էր եւ Ալաւկայ որդին, որ կը գրէ, «Նոյն եւ ոչ ճաշակել հրաման առաք՝ ոչ միայն ի ճրա(գալոյցսն)», եւ այլն (ՂԱ): Ադոնց տեսական համոզումը գործնականի վերածեց Գրիգոր կթղ. Անաւարզեցին, որ հակամէտ յոյն եւ մանաւանդ լատինական արարողութեանց, «Եդ սահման՝ զի մի՛ լուծցեն զճրագալոյցն յեղ եւ ի րան եւ յոր ինչ առանց մտոյ է» (Որբ. 327): Նոյն ինքն առ Հեթում թղթին մէջ կը յորդորէր հաւանիլ՝ որ «զգատկին շաբաթ օրն պահեմք»: Ծննդեան ճրագալուցի լուծման չի հակառակիր, թերեւս զի աւագ շաբաթն իբրեւ մասն «աղուհացից՝» աւելի խիստ կը համարուէր: Անոր նորածեուութեանց դէմ դարձաւ Սիւնեաց մետրապոլիտ Ստեփանոս պատմիչն իսկ, իւր վիճակի եպիսկոպոսաց ու կղերին հետ, եւ պատասխան մը զրեցին, յորում կը պահանջէին՝ հայ եկեղեցւոյ սովորոյթն անաղարտ պահել, ճրագալուցին «նաւակատիս եւ նախատօնակ» կատարելով, եւ «խթիլ յեղ եւ ի պանիր եւ յոր ինչ ա-